ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1965 Общественные науки

Մ. Մ. Մինասյան

ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում աշխատավորական մասսաների ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության բարձրացումն առաջին հերթին իր վառ արտահայտությունն է գտնում սովետական հասարակարգի տնտեսական կյանքում, նյութական արտադրության ոլորտում: Սովետական երկրի բանվոր դասակարգը հերոսական աշխատանք է կատարում սոցիալիստական արդյունաբերության նոր վերելքի ապահովման, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման և այդ գործում կարևոր նշանակություն ունեցող տեխնիկական առաջադիմության զարգացման ուղղությամբ:

Տեխնիկական առաջադիմությունը մեր երկրում դարձել է համաժողովրդական գործ, որը աշխատանքի նկատմամբ սովետական մարդկանց սկզբունքորեն նոր վերաբերմունքի արտահայտություններից է: Սոցիալիստական արտադրահարաբերությունների պայմաններում արմատապես փոխվել են տեխնիկական առաջընթացի գործոնները, տեխնիկայի հասարակական նշանակությունը: Ցույց տալով սոցիալիզմի ժամանակ տեխնիկայի այդ նոր դերը, Լենինը նշում է տեխնիկայի զարգացման գործում աշխատավորների շահագրգռվածության պատճառը: «Տեխնիկայի բոլոր հրաշքները, կուլտուրայի բոլոր նվաճումները,—գրում է Լենինը,—դառնալու են համաժողովրդական սեփականություն, և այսուհետև մարդկային խելքն ու հանճարն էլ երբեք բռնության միջոցների, շահագործման միջոցների չեն վերածվի»[1]:

Մեր երկրում այսօր կան բոլոր այն օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալները, որոնք վճռական դեր են կատարում, լայն հնարավորություններ ստեղծում ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց աշխատանքային ակտիվության ու նախաձեռնության անընդհատ բարձրացման համար: Այդ նախադրյալների մեջ կարևոր է հիշատակել այն, որ արդյունաբերության մեջ բուռն թափով զարգանում է տեխնիկան, ամրապնդվում է դեպի կոմունիզմ գնացող սոցիալիստական հասարակարգի բարոյա-քաղաքական միասնությունը, գնալով բարելավվում են ժողովրդի կյանքի պայմանները, բարձրանում է աշխատավորների կուլտուր-տեխնիկական և հանրակրթական մակարդակը, նրանց կոմունիստական գիտակցականությունը:

Տեխնիկական առաջադիմության բարդ խնդիրների լուծման պրոցեսում հանդես են գալիս բանվորների ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության բազմաթիվ ձևեր, որոնց մեջ առանձնահատուկ նշանակություն ունի տեխնիկական առաջադիմության էնտուզիաստների՝ ռացիոնալիզատորների և

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 590:

գյուտարարների շարժումը։ Այդ շարժումն այսօր, մեր ամբողջ երկրում, դարձել է պետական կարևոր նշանակություն ունեցող գործ։

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների նորարարների, ռացիոնալիզատորների և գյուտարարների բազմահազարանոց բանակը ստեղծագործ, եռանդուն գործունեություն է ծավալել տեխնիկական առաջադիմության զարգացման ուղղությամբ։ Այն հանդես է գալիս կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման կատարելագործման, արտադրության տեխնոլոգիայի և աշխատանքի կազմակերպման բարելավման, ֆիզիկական ծանր աշխատանքի վերացման, հին սարքավորումները, գործիքները նորերով փոխարինելու և մոդեռնացնելու վերաբերյալ հազարավոր առաջարկություններով, որոնց տնտեսական արդյունավետությունն արտահայտվում է աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի որակը բարձրացնելու, ինքնարժեքը իջեցնելու մեջ և այլն։

Ռացիոնալիզատորների և գյուտարարների շարժման արդի էտապի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ որպես արտադրության նորարարներ հանդես են գալիս ոչ թե առանձին մարդիկ, տաղանդավոր անհատներ, կամ նրանց առանձին խմբեր, այլ բանվորների ճնշող մեծամասնություններ։ Սոցիալիստական կարգերը գիտակցական ստեղծագործության են հանել միլիոնավոր մարդկանց։

Ռացիոնալիզատորների և գյուտարարների, արտադրության նորարարների շարժման մասսայական բնույթը շատ լավ փաստարկվում է Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների օրինակով։ Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանում ռացիոնալիզատորական և գյուտարարական ակտիվ գործունեություն են ծավալել ավելի քան 600 աշխատողներ, իսկ Ս. Մ. Կիրովի անվան գործարանում արտադրության նորարար է յուրաքանչյուր չորս աշխատողից մեկը։

Յոթնամյակի անցած տարիներին ռացիոնալիզատորների և գյուտարարների թիվը տարեցտարի աճել է նաև հանրապետության արդյունաբերության մեջ ամբողջությամբ վերցրած։ Այդ երևում է հետևյալ աղյուսակից, որը կազմված է ՀՍՍՌ Մինիստրների սովետի վիճակագրական վարչության տվյալների հիման վրա[2]։

Հայկական ՍՍՌ արդյունաբերության մեջ ռացիոնալիզացիայի և գյուտարարության դինամիկան 1959—1964 թթ.

Տարիներ	Ստացված ռացիոնալիզատորական և գյուտարարական առաջարկությունների թիվը (հազարներով)	Ներդրված առաջարկությունների թիվը (հազարներով)	Առաջարկություններից ստացվող տարեկան պայմանական օգուտը (մլն. ռուբլիներով)
1	2	3	4
1959	13,6	8,7	6,3
1960	15,1	9,4	8,1
1961	15,5	9,5	8,7
1962	15,4	10,2	9,1
1963	16,3	11,1	10,8
1964	18,8	13,1	14,0

2 Աղյուսակն ամբողջությամբ հրապարակվում է առաջին անգամ։

Տոկոսներով՝ 1959 թվականի համեմատությամբ.

1	2	3	4
1959	100,0	100.0	100,0
1960	111,0	108,0	128,0
1961	114,0	109,0	138,0
1962	114,0	117,0	144,0
1963	120,0	127,5	171,5
1964	138,2	150,5	221,1

Աղյուսակը որոշակիորեն ցույց է տալիս, որ տարեցտարի ոչ միայն աճում է ռացիոնալիզատորական և գյուտարարական առաջարկությունների թիվը, այլև առավել բարձր տեմպերով աճում է ներդրված առաջարկություններից ստացվող օգուտը։ Այսպես, եթե 1959 թ. համեմատությամբ, 1964 թ. արտադրության մեջ ներդրված ռացիոնալիզատորական և գյուտարարական առաջարկությունների թիվն աճել է 50,5 տոկոսով, ապա այդ առաջարկություններից ստացվող տարեկան պայմանական օգուտը աճել է 121,1 տոկոսով։

Դա նշանակում է, որ ռացիոնալիզացիան և գյուտարարությունը ծավալվում են ոչ միայն լայնությամբ, որի հետևանքով ավելի ու ավելի մեծ քանակությամբ աշխատավորներ են ընգրկվում ստեղծագործական մտավոր աշխատանքի բնագավառը, այլև խորությամբ՝ նրանց աշխատանքը դառնում է ավելի ու ավելի բեղմնավոր, արդյունավետ և հսկայական օգուտներ է բերում ժողովրդական տնտեսությանը։

Հայկական ՍՍՌ մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների ռացիոնալիզատորների և գյուտարարների աշխատանքների ուսումնասիրությունը բերում է այն համոզմանը, որ նրանց գործունեության հիմնական բնագավառներից մեկը արտադրական պրոցեսների և արտադրության տեխնոլոգիայի կատարելագործման ուղղությամբ կատարվող աշխատանքն է։

Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանի անվանի ռացիոնալիզատորներ Կ. Աբրահամյանը, Ռ. Զարչյանը և Ս. Խաչատրյանը նախաձեռնում են կատարելագործել 1—8 արտադրամասի ծրարման տեղամասի պնևմոտրանսպորտային հարմարանքները։ Բանն այն է, որ ացետիլցելյուլոզը միջանկյալ սիլոսներից ապրանքային մեջ էր տեղափոխվում պնևմոտրանսպորտով՝ ճրնշման տակ։ Այդ ժամանակ տեղի էր ունենում ացետիլցելյուլոզի ոչ-լրիվ տեղափոխում, բունկերները կախված մնացած ացետիլցելյուլոզից դատարկելու համար ստիպված կատարում էին բունկերների խառնում (շուրովկա), ինչպես վերևից, այնպես էլ ներքևից։ Դա պահանջում էր սպասարկող մեծ անձնակազմ, տեղիք էր տալիս ացետիլցելյուլոզի կորուստների, խիստ իջեցնում էր փաթեթավորող բանվորների աշխատանքի արտադրողականությունը, խափանվում էր համաչափ աշխատանքը, խախտվում տեխնոլոգիական ռեժիմը։ Այս ամենից բացի, արտադրական կարողությունների հավասարաչափ բեռնման համար պահանջվում էին 9 լրացուցիչ էլեկտրաշարժիչներ և փականներ։ Երկար մտածելուց հետո ռացիոնալիզատորները եկան այն եզրակացության, որ ացետիլցելյուլոզի բունկերներում սեղմած օդի փոխարեն կարելի է օգտագործել վակուումը, այսինքն նրանք առաջարկում էին ացետիլցելյուլոզի պնևմոտրանսպորտային տեղափոխումը իրականացնել վակուումով։ Առաջարկությունն արժանացավ հավանության և այն ներդրվեց արտադրության մեջ։

Այժմ ինի փոխարեն գործում է մեկ էլեկտրաշարժիչ, վերացել է սպասարկող անձնակազմի անհրաժեշտություններ։ Բարձրացել է արտադրության կուլտուրան, վերացել են սարքավորումների խափանումները։ Միաժամանակ հնարավորություն է ստեղծվել խնայելու 45 սահանափակային փականներ (шлюзный затвор), 45 էլեկտրաշարժիչներ· 45 ռեդուկտորներ և դեկավարման պուլտեր։ Նրանց առաջարկով այդտեղ տեղադրվել են նաև ավտոմատ փոխադրիչ և պարկեր կարող ավտոմատ մեքենաներ։ Լիովին մեքենայացվել են պատրաստի արտադրանքի փոխադրման աշխատանքները։ Նորարարության շնորհիվ տարեկան տնտեսվում է 82 հազար 248 ռուբլի և մեկ միլիոնից ավելի կիլովատ ժամ էլեկտրաէներգիա։

Էլեկտրալամպերի, «Պոլիվինիլացետատ» գործարանների և մի շարք այլ ձեռնարկությունների ռացիոնալիզատորների աշխատանքի փորձի ուսումնասիրությունն ու ընդհանրացումը բերում է այն եզրակացության, որ այնտեղ, ուր տնտեսապես նպատակահարմար են ավտոմատացումն ու մեքենայացումը, ռացիոնալիզատորները չեն անցնում տեխնիկական առաջադիմության միջանկյալ աստիճաններով։ Ռացիոնալիզատորներն իրենց տեխնիկական ստեղծագործության մեջ մասնակի փորձի հիման վրա կատարվող բարելավումներից անցնում են արտադրության գիտականորեն, պլանաչափ, կոմպլեքսային կատարելագործմանը։

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների ռացիոնալիզատորները մեծ աշխատանք են կատարում նաև նոր մեքենաների և սարքավորումների ստեղծման, դրանց մոդեռնացման, աշխատանքի առաջավոր մեթոդների արմատավորման ուղղությամբ։ Ընդ որում, հարկավոր է նշել, որ ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժման տարբեր ուղղությունների մեջ ռացիոնալիզատորներն առավել ուշադրություն են դարձնում սարքավորումների հզորության ավելացմանը, արտադրական ցիկլի կրճատմանը և այլն։ Սարքավորումների մոդեռնացման գործում ռացիոնալիզատորների ակտիվությունը բացատրվում է նրանով, որ տարիներ շարունակ աշխատելով միևնույն հաստոցների և մեքենաների վրա, նրանք շատ լավ գիտեն դրանց թերությունները և այդ թերությունների վերացումը նրանց համար դառնում է հրամայական պահանջ։

Աշխատանքի առաջավոր մեթոդների արմատավորման, նոր մեքենաների և սարքավորումների ստեղծման ուղղությամբ արդյունավետ աշխատանք են կատարում Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի ռացիոնալիզատորները։ Այսպես, «ԵՍ» տիպի գեներատորների ստատորի փոքատի (паз) սեպերի մշակման տեխնոլոգիան լրիվ չէր ապահովում հավաքման համար անհրաժեշտ սեպերի քանակը, որը լուրջ դժվարություններ էր ստեղծել ձեռնարկության համար։ Եվ ահա կոլեկտիվին օգնության է հասնում անվանի ռացիոնալիզատոր, հմուտ փականագործ Հ. Հակոբյանը։ Նա որոշում է ստեղծել սեպերի մշակման նոր հաստոց, կազմում է այդ հաստոցի կինեմատիկ սխեման և կտրող գործիքի կոնստրուկցիան, որի կտրող եզրը նախատեսված էր պատրաստել կարծր համաձուլվածքից։ Գործարանի հասարակական տեխնոլոգիական բյուրոյում ընդգրկված ինժեներներ Պ. Ավագյանի և Ն. Վարժապետյանի միջոցով նախագծվում են այդ հաստոցի բանվորական գծագրերը և այնուհետև հաստոցը պատրաստվում է № 31 ցեխում՝ Հ. Հակոբյանի և նրա բանվոր ընկերների անմիջական մասնակցությամբ։

Այժմ հաստոցը տեղադրված է № 9 արտադրամասում, այն աշխատում է երկհերթ և լրիվ բավարարում ձեռնարկությանն անհրաժեշտ սեղերի պահանջը։

Աշխատանքի առաջավոր մեթոդների արմատավորման, նոր մեքենաների և սարքավորումների ստեղծման ուղղությամբ ստեղծագործական մեծ աշխատանք են կատարում Երևանի ժամացույցի գործարանի ռացիոնալիզատորները։ Այդ գործին օգնեց ռացիոնալիզատորների կողմից նախագծված և ներդրված՝ ժամացույցի՝ պլաստիկ նյութերից պատրաստված պատյանի երեք անցքերի անցքավորման կիսաավտոմատ հաստոցը։ Մինչ այդ հաստոցի ներդրումը, պատյանի անցքավորումը կատարվում էր առանձին-առանձին՝ փոխադրիչի տակ դարձեր կատարելով։ Այժմ բանվորը միայն տվյալ մասը դնում և վերցնում է հաստոցի բազայավորող գլանի վրա։ Հաստոցի երեք իլերը կտրման շարժում ստանում են առանձին էլեկտրամոտորներից, իսկ մատուցման շարժումը՝ հաստոցի կենտրոնում տեղավորված շառավղային բռունցքների միջոցով։ Իլերը ունեն մատուցման միմյանցից անկախ կարգավորում։

Մեր արդյունաբերական ձեռնարկությունների ռացիոնալիզատորների գործունեության հատկանշական կողմը, ամենից առաջ, այն է, որ նրանց գործունեության մեջ ակներև է դառնում սոցիալիստական աշխատանքը կոմունիստականի վերածվելու պրոցեսը, որը սոցիալիստական հասարակության կյանքում տեղի ունեցող ամենախոր փոփոխությունների արտահայտությունն է։ Նորարարական աշխատանքը շատ շատերի համար դարձել է բնավորության կիծ, գիտակցված անհրաժեշտություն, ներքին պահանջմունք, նրանց գործունեության և մտածողության մեջ գնալով ավելի շեշտված է դառնում ստեղծագործությունը և դրա հետ միասին հաստատակամությունը, տեխնիկայի հանդեպ քննադատական վերաբերմունքը, հարցերի լուծման գործում ինքնուրույնությունն ու ինքնագործունեությունը։

Բազմաթիվ ռացիոնալիզատորների և գյուտարարների հետ ունեցած զրույցները և նրանց պրակտիկ գործունեության ուսումնասիրությունը բերում է այն համոզմանը, որ նրանք իրենց գործի իսկական արվեստագետներն են, և միաժամանակ նրանց ստեղծագործ աշխատանքը կապված է հասարակության բարօրության շահի հետ։ Ռացիոնալիզատորները ձգտում են պրակտիկ կյանքում, աշխատանքում ցույց տալ իրենց ֆիզիկական և մտավոր հարուստ հնարավորությունները։ Փոխվում է նաև նրանց և նրանց հետ միասին բանվորական լայն խավերի արտաարտադրական ժամանակի օգտագործման կառուցվածքը։ Այդ ժամանակի մի զգալի մասը տրամադրվում է տեխնիկական և հանրակրթական մակարդակի բարձրացման համար։ Նորարարական գործունեությունը որպես իսկական ստեղծագործական պրոցես բանվորին զբաղեցնում է ամենուրեք, ամեն ժամ՝ մինչև կարողանում է լուծել առաջադրված խնդիրը։ Բնորոշ է այն, որ այդ ամբողջ ընթացքում, նրա մտքի և ձեռքերի աշխատանքի ամբողջ պրոցեսում, անձնական նյութական շահագրգռվածության հետ միասին որպես նրան առաջ մղող կարևոր ուժ հանդես է գալիս հոգեկան, բարոյական բավարարում ստանալը, ստեղծագործական ներշնչանքի հաճույքը։ Երևվում է բանվորի աշխատանքի էսթետիկական ստեղծագործության մակարդակի բարձրանալու պրոցեսը։ Ընդ որում, հարկավոր է հիշատակել, որ ստեղծագործելու բուն պրոցեսում նյութական մղումներն անցնում են երկրորդ պլան։ Պետք է նշել, որ նորը հենց սա է, որ այսօր զարգացման ստենդեց ունի։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Աշխատանքի բովանդակության հարստանալու այս պրոցեսը հնարավոր է միայն սոցիալիստական արտադրահարաբերությունների պայմաններում, սոցիալիստական արտադրահարաբերություններից կոմունիստական արտադրահարաբերություններին անցնելու ժամանակաշրջանում։ Ազատ աշխատանքը պահանջում է, որպեսզի աշխատանքի պրոցեսը լինի ստեղծագործական, այն բերի ստեղծագործելու բավարարություն, հնարավորին չափ ազատ լինի անձնական, նյութական շարժառիթներից և խթանվի հասարակության համար նորանոր բարիքներ ստեղծելու ձգտմամբ։ Իսկ դա հարստացնում է բանվորի հոգևոր աշխարհը, որը հնարավոր է միայն սոցիալիստական արտադրահարաբերությունների պայմաններում, ինչպես Մարքսն ու Էնգելսն են ցույց տալիս «...անհատի իրական հոգևոր հարստությունը ամբողջապես կախված է նրա իրական հարաբերությունների հարստությունից»[3]։

Այս ամենը բերում են այն եզրակացության, որ մեր երկրում նորարարական գործունեությունը այն կարևոր ուղիներից է, որը ակտիվորեն ազդում է նոր մարդու ստեղծման, նրա ձևավորման վրա։ Այն միաժամանակ փոխում է աշխատանքի բնույթը, նրա բովանդակությունը։

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում մեծ թափով ծավալվող ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժումը մեծապես նրպաստում է արտադրական այն պրոցեսների կատարելագործմանը, որոնք առավել աշխատատար են։ Այդ իմաստով առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում «Պոլիվինիլացետատ» գործարանի 1—3 ցեխի փականագործների բրիգադավար Ս. Շահբազյանի, նույն ցեխի ավագ ապարատավար Ս. Դավթյանի և տեխնոլոգ Ա. Նազարյանի համատեղ ստեղծագործական աշխատանքը, որի արդյունքը 1963 թ. վերջերին դարձավ «Վինիֆլեքսի անընդհատ լվացումը» ռացիոնալիզատորական առաջարկությունը։ Մինչև այդ առաջարկությունը, վինիֆլեքսի լվացումը կատարվում էր պարբերաբար, ացետիլատորների մեջ սարդ-ֆիլտրների օգնությամբ։ Լվացման պրոցեսը տևում էր համեմատաբար երկար (13 ժամ)։ Պտուտահանի (маточник) հետծծումը և ջրի բեռնավորումը կատարվում էին խառնիչի կանգնեցման ժամանակ։ Ընդ որում շատ դժվար էր գործի դցել ացետիլատորների խառնիչները, որը հաճախ առաջացնում էր խափանումներ՝ ընդհուպ խառնիչների շարքից դուրս գալը։ Լվացման պրոցեսը բավական դժվար էր, աշխատատար և պահանջվում էր ապարատավարների մշտական մասնակցությունը։ Ռացիոնալիզատոր բանվորները ու ինժեներները առաջարկեցին վինիֆլեքսի լվացումը կատարել անընդհատ վակուումի տակ՝ հատուկ ցանցավոր ֆիլտր դիլդայի օգնությամբ, որը պատրաստված է չժանգոտվող պողպատից։ Անընդհատ լվացումը լրիվ վերացրեց ացետիլատորների խառնիչների շարքից դուրս գալու հնարավորությունը, լվացման տևողությունը կրճատեց երկու ժամով, բարելավվեցին լվացման պրոցեսի սպասարկման և շահագործման պայմանները, զգալիորեն հեշտացավ բանվորի աշխատանքը, վերացավ պտուտահանի պարբերաբար հավաքման և դատարկման հավաքարանի անհրաժեշտությունը։ Հնարավոր դարձավ առանց միջանկյալ հավաքարանների կատարելու լվացող ջրի անընդհատ հեռացումը։

Ռացիոնալիզատորական առաջարկության ներդրումը գործարանին հնարավորություն տվեց տնտեսելու տարեկան 13 հազար 715 ռուբլի։

---

[3] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 36.

Այս և մի շարք այլ արդյունաբերական ձեռնարկություններում (Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, «Պոլիվինիլացետատ» գործարաններ, Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատ և այլն) բանվորների և ինժեներների ռացիոնալիզատորական համատեղ աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ սերտ համագործակցությունը, որը բխում է ժամանակակից արտադրության բնույթից, մեծ արդյունք է տալիս, ակտիվ ազդեցություն է գործում սոցիալիստական արտադրության զարգացման ու կատարելագործման վրա։ Այդ համագործակցության դրսևորման կազմակերպական ձևերից են բազմաթիվ ֆաբրիկաներում և գործարաններում ստեղծված կոմպլեքսային ստեղծագործական բրիգադները, ուր աշխատում են և՛ նորարար ինժեներները, և՛ նորարար բանվորները։ Այդ բրիգադների ստեղծումը բխում է ներկա ժամանակաշրջանում արտադրության զարգացման բարձր մակարդակից, երբ անհատի համար դժվար է արտադրության մեջ էական նշանակություն ունեցող կատարելագործումներ իրականացնելը։ Մի շարք արդյունաբերական ձեռնարկություններում կատարված ուսումնասիրությունները բերում են այն խոր համոզման, որ ռացիոնալիզատոր բանվորը մեկ մարդ չէ։ Տվյալ ռացիոնալիզատորական առաջարկությունը ստեղծագործական կոլեկտիվ մտքի արգասիք է, քանի որ սոցիալիստական արդյունաբերական ձեռնարկությունում աշխատողների միջև ստեղծված նոր հարաբերությունների պայմաններում ռացիոնալիզատորը մինչև իր առաջարկությունը ներկայացնելն ու ներդնելը խորհրդակցում է բազմաթիվ ընկերների հետ՝ բանվորների և ինժեներների հետ, և այնուհետև միայն կարողանում է իր նորամուծության վերաբերյալ գալ մի ամփոփ եզրակացության։ Կոլեկտիվ աշխատանքը դառնում է արտադրության զարգացման շահերից բխող օբյեկտիվ անհրաժեշտություն։ Որից և վառ ձևով դրսևորվում են կոլեկտիվ աշխատանքի, սոցիալիստական կոլեկտիվիզմի մեծ առավելությունները։ Սա կրկին անգամ ցույց է տալիս իմպերիալիզմի գաղափարական ծառաների այն պնդումների սնանկությունը, ըստ որոնց սոցիալիստական կոլեկտիվիզմը հասարակական հարաբերությունների անհասունության, անհատի հետամնացության, նրա դերի նսեմացման հետևանք է։ Ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժման փաստերը ակնառու կերպով վկայում են, որ սոցիալիստական կոլեկտիվիզմը երբեք էլ չի նշանակում մարդու անհատականության և ինքնուրույնության նսեմացում։ Ընդհակառակը, ռացիոնալիզատորների աշխատանքի ստեղծագործական բնույթը, ընկերական փոխհարաբերությունների ամրապնդումը հարստացնում են նրանցից յուրաքանչյուրի անհատականությունը, նոր պայմաններ են ստեղծում նրանց բազմակողմանի զարգացման, աշխատանքային ակտիվության բարձրացման համար։

Ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժման մեջ բանվորների և ինժեներների աշխատանքի կոլեկտիվ ձևերը մեծացնում են ռացիոնալիզատորական գործունեության տնտեսական արդյունավետությունը, օգնում են ավելի արագորեն լուծելու տեխնիկական բարդ առաջադրանքները։

Ստեղծագործական այս կոլեկտիվների աշխատանքի բնորոշ կողմերից մեկն այն է, որ այստեղ բանվորի աշխատանքը գնալով ստանում է ինտելեկտուալ երանգ, իրականանում է մտավոր և ֆիզիկական աշխատանքների ներդաշնակ զուգակցումը, նրանց տարբերությունների աստիճանական հաղթահարումը։ Հիմնականում ֆիզիկական աշխատանք կատարող բանվորը փոխում

է իր աշխատանքային գործունեության տեսակը։ Ռացիոնալիզատորական առաջարկությունները ենթարկվում են կոլեկտիվ քննարկման, լրացումներ, ուղղումներ, արժեքավոր դիտողություններ են արվում, մարդիկ խորհրդակցում են առաջարկությունն ավելի արդյունավետ դարձնելու համար։ Այսպիսով, մեկի ստեղծագործ միտքը դառնում է ամբողջ բրիգադի կոլեկտիվ ստեղծագործություն։ Դա միաժամանակ հնարավորություն է տալիս տեսնելու այն օրինաչափություն, որ բանվոր ռացիոնալիզատորներն իրենց աշխատանքի փորձով և գիտելիքներով մոտենում են ինժեներա-տեխնիկական աշխատողներին։ Որոշակիորեն երևում է, որ կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում էլ ավելի է զարգանում ինժեներական մտքի և պրակտիկ բանվորների համագործակցությունը։

Բանվորների և ինժեներների անընդհատ զարգացող համագործակցությունը մեծապես նպաստում է սոցիալիստական արդյունաբերության մեջ ընդհանրապես համագործակցության և փոխօգնության հարաբերությունների զարգացմանը։

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների ռացիոնալիզատորների և գյուտարարների ստեղծագործական նախաձեռնությունը իր վառ արտահայտությունն է գտնում արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար մղվող պայքարում։ Ինքնարժեքի իջեցման համար ռացիոնալիզատորական և գյուտարարական աշխատանքը նպատակամղվում է այդ գործի համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են աշխատանքի արտադրողականության բարձրացումը, էներգիան, վառելիքի խնայողությունը, էժան նյութերի օգտագործումը, անարտադրողական ծախսերի վերացումը և այլն։

Ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժման բնորոշ առանձնահատկություններից է այն, որ որպես օրինաչափություն ռացիոնալիզատորական միտքը գործում է այն ժամանակ և այնտեղ, ուր առկա են դժվարությունները, ուր կյանքն է ստիպում զբաղվել նորարարությամբ, երբ հարկավոր է ելք գտնել արտադրական պրոցեսում առաջացած խոչընդոտները հաղթահարելու համար։ Այստեղ հանդես է գալիս բանվորի կոնստրուկտիվ մտածողությունը։ Նա սկսում է փնտրել և անպայման ելք է գտնում արտադրության, կոլեկտիվի պահանջները բավարարելու համար։ Երևում է նորարարներին բնութագրող հիմնական հատկանիշներից մեկ ուրիշը՝ շահերի լայն դիապազոնը։ Սրանք այն նոր մարդիկ են, որոնց Լենինը տեսնում էր դեռևս սովետական կյանքի արշալույսին։ Նրանք այն ուժեղ կամք, միտք, բարձր գիտակցություն ունեցող, ստեղծագործող և նախաձեռնող մարդիկ են, որոնք այսօր իրենց գործնական աշխատանքով նոր հասարակարգ են ստեղծում։ Արտադրության նորարարների աշխատանքային այս ակտիվության հիմնական առաջմղիչ ուժերի մեջ զարգացման տենդենց ունի բարոյական գործոնը, աշխատանքի նկատմամբ ունեցած նոր վերաբերմունքը։ Բազմաթիվ բանվոր նորարարների հետ ունեցած զրույցները, նրանց աշխատանքի և կյանքի ուսումնասիրությունը բերում են այն համոզմանը, որ նրանք նկատի ունենալով իրենց նյութական և բարոյական շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ մտածում են նաև այն մասին, թե դրանով կվերանա՞ն արդյոք կոլեկտիվի առջև ծառացած դժվարությունները, դրանից կշահի հարազատ գործարանը, արտադրությունը, հասարակությունը։ Մեր բազմաթիվ նորարարների մեջ նկատելի է, որ անձնական նյու-

թական շահագրգռվածությունը սերտորեն զուգակցվում է անձնական բարոյական շահագրգռվածության հետ, և այնուհետև, սրանք իրենց հերթին զուգակցվում են աշխատանքի լավ արդյունքների համար կոլեկտիվ շահագրգռվածության հետ։

Արտադրության զարգացման և կատարելագործման բարոյական խթանների աղբյուրը արտադրության նորարարների մոտ բարձր գիտակցականությունն է, պատասխանատվության զգացումը հասարակության, կոլեկտիվի նկատմամբ, իրենց աշխատանքի հասարակական-քաղաքական նշանակության գիտակցումը։ Բարոյական խթանների շարքում կարևոր նշանակություն են ձեռք բերում նաև խղճի, պատվի, հպարտության բարձր զգացումները, այն, որ նրանց հայրենանվեր աշխատանքը հասարակական ճանաչման է արժանանում, բարձր է գնահատվում իրենց ընկերների, կոլեկտիվի, ամբողջ հասարակության կողմից։

Ռացիոնալիզատորական և գյուտարարական շարժման նշված առանձնահատկությունների ընդհանրացումն այն համոզման է բերում, որ մեր երկրում աշխատանքը աստիճանաբար դադարում է միայն ապրուստի միջոց լինելուց և գնալով միաժամանակ միլիոնավոր մարդկանց համար դառնում է կենսական պահանջմունք, հասարակական պարտք։ Սա սոցիալիստական հասարակարգի զարգացման օրինաչափությունն է, այն մեծ առավելություններից մեկը, որը չկա և չի կարող լինել կապիտալիստական կարգերում։ Այս հասարակարգում նորարարական գործունեության մեջ անհնարին է բարոյական խթանների առկայությունը։ Այս իմաստով հատկանշական է ռացիոնալիզատորների աշխատանքը ԱՄՆ-ում։ «Ամերիկա» ամսագրի 1964 թ. № 93-ում տպագրված «Ռացիոնալիզատորների աշխատանքը անտեղի չի կորչում» խմբագրական հոդվածում նշվում է, որ ռացիոնալիզատորներին վճարելու համար որոշակի ծախսեր են կատարում նահանգների, ֆեդերալ կառավարությունները, «Ջենեռալ մոտորս», «Լոկհիդ» կոմպանիաները, Ֆորդը և մի շարք այլ մոնոպոլիստական ընկերություններ, սակայն այդ հոդվածում ոչինչ չի ասվում ռացիոնալիզատորական գործունեության մեջ բարոյական մղումների մասին։ Չէր էլ կարող ասվել, որովհետև այդպիսիք կապիտալիստական արտադրահարաբերությունների պայմաններում չկան։ Իսկ որոշ մոնոպոլիստական ընկերությունների ձեռնարկություններում էլ բանվորներին արգելում են զբաղվել նորարարությամբ, որովհետև գտնում են, որ դա խանգարում է նրանց հիմնական աշխատանքին։ «Յունայտեդ կարբ ֆաստներ կորպորեյշն» ֆիրմայի վիցե-պրեզիդենտ Ուոլտեր Ջոնսն, օրինակ, գրում է. «Երբ դուք աշխատողին վարձատրում եք, նա դադարում է իր ուղղակի աշխատանքը կատարելուց և սկսում է տալ նորարարական նոր առաջարկություններ»[4]։ Ամսագիրն ստիպված է խոստովանել, որ բազմաթիվ են նաև այն դեպքերը, երբ դրամական վարձատրությունները չեն ոգևորում, ստեղծագործության չեն մղում բանվոր նորարարներին և նրանք այլևս չեն զբաղվում նորարարական գործունեությամբ։ Դրա հիմնական պատճառն այն է, որ մարդկային աշխատանքին հատուկ ստեղծագործությունը շահագործողական հասարակարգում անտագոնիստական հակասության մեջ է մտնում աշխատանքի հասարակական իրավիճակի հետ, բանվորի աշխատանքը, ինչպես Մարքսն է նշում, այնտեղ «...պատկանում է ոչ

[4] Журн. „Америка", 1964 г., № 93. стр. 37.

թե իրեն, այլ ուրիշին և ինքն էլ աշխատանքի պրոցեսում պատկանում է ո՛չ թե իրեն, այլ ուրիշի»[5]։

Հաստատ, անխոտոր ընթացքով իրականանում է սովետական մարդու հասարակական բովանդակության փոփոխման պրոցեսը։ Ռացիոնալիզատորական աշխատանքը պահանջում է ֆիզիկական և մասնավորապես մտավոր ուժերի մեծ լարում, սակայն աշխատանքի նկատմամբ ռացիոնալիզատորների նոր վերաբերմունքը պետք է բացատրել նրանով, որ նրանք խորապես հասկանում են իրենց դերը նոր հասարակարգի կառուցման գործում։ Այս դեպքում աշխատանքի նկատմամբ եղած նոր վերաբերմունքը, բացի աշխատանքի բուն բովանդակությամբ բացատրելուց, հարկավոր է բացատրել նաև սոցիալական հարաբերություններով, որը վերափոխում է մարդու գիտակցությունը։

Խոր համոզմունքով կարելի է ասել, որ ռացիոնալիզատորական և գյուտարարական աշխատանքը լինելով աշխատավորների ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության վառ դրսևորումը, այն ռեալ ուղիներից է, որ տանում է դեպի աշխատանքի կոմունիստական ձևերի հաստատում։

Ռացիոնալիզատորների և գյուտարարների, արտադրության նորարարների աշխատանքային ակտիվության բնորոշ առանձնահատկություններից է այն, որ նրանք չեն սահմանափակվում անձնական հաջողություններով, ռացիոնալիզատորական առաջարկությունները ներկայացնելով և դրանք արտադրության մեջ ներդնելով։ Նրանք այնուհետև կազմակերպչական ակտիվ գործունեություն են ծավալում, սկսում են ընկերներին հաղորդակից դարձնել՝ իրենց նորամուծություններին, աշխատանքի դրական փորձին, սովորեցնում են աշխատանքի նոր, առաջավոր մեթոդները և ձևերը, տեխնիկական տվյալ կատարելագործումը դարձնում են բոլորի սեփականությունը։ Արտադրության առաջավորների օրինակը դառնում է վարակիչ, ոգեշնչում է բոլորին, մարդկանց մեջ հավատ է ներարկում սեփական ուժերի նկատմամբ։ Ստեղծագործ աշխատանքի առաջավոր փորձը վեր է ածվում հզոր ուժի, հասարակական վիթխարի կարողության։ Կարևոր է նշել, որ աշխատանքի առաջավոր փորձի մասսայականացումը չի դիտվում որպես զուտ տեխնիկական խնդիր, նկատի չի առնվում գործի միայն տեխնիկական կողմը, այն դարձել է բանվորների գաղափարական դաստիարակության կարևոր բաղկացուցիչ մասը։ Առաջավոր փորձի մասսայականացման ժամանակ հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում չեն սահմանափակվում միայն նորարարության տեխնիկական նկարագրությամբ, խոսում են հենց մարդու մասին, աշխատանքի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի, մտքերի ու ձգտումների, բարոյական կերպարի մասին։ Միշտ նկատի է առնվում, որ լուսավորն ու առաջավորը մարդկանց կողմից ավելի հեշտ են ընկալվում և ընդօրինակվում և ապա՝ աշխատանքային սխրանքների կոչում։

Այս իմաստով հատկանշական է ինչպես Միության բազմաթիվ ձեռնարկություններում, այնպես էլ Հայաստանի մի շարք գործարաններում ու ֆաբրիկաներում կոմունիստական աշխատանքի փորձի դպրոցների կազմակերպումը։

Հանրապետության աշխատավորական կոլեկտիվներում նորարարական աշխատանքի փորձի մասսայականացման գործում ստեղծված մեծ ակտիվությունը մեր մարդկանց նոր, կոմունիստական բարոյականության հաստատումա

---

5 «Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին», հ. 1, Հայպետհրատ, 1963, էջ 185։

է և պարտությունը բուրժուական բարոյականության, որը խրախուսում է արտադրական գաղտնիքները ընկերներից թաքցնելը, մարդկանց միայն և միայն շահույթի ոգով դաստիարակելը, էգոիզմն ու ինդիվիդուալիզմը։ Սեփական կյանքի պրակտիկայից եզրակացություններ անելով, բուրժուազիայի գաղափարախոսները ձգտում են էգոիզմը յուրահատուկ համարել բոլոր մարդկանց համար և մեղանչելով սովետական մարդկանց կյանքի ու աշխատանքի բազմահարուստ փաստերի և ճշմարտության առջև, դա հավասարապես վերագրում են նաև մեր երկրի աշխատավորներին։ Արևմտագերմանական իմպերիալիզմի գաղափարախոս, հայտնի փիլիսոփա Գուստավ Վետերն իր «Սովետական գաղափարախոսությունն այսօր» գրքում գրում է. «Ինչ վերաբերում է առանձին բարոյական պատվիրաններին, ապա կոմունիստական բարոյականությունը բացարձակապես ոչինչ նոր բան չի տալիս։ Եթե էգոիզմի հաղթահարումը հանդիսանում է նրա գլխավոր բովանդակությունը, ապա դա նորություն չէ՝ կոմունիզմը գնում է քրիստոնեական բարոյականության հետքերով։ Նա ձևացնում է, թե կարողանում է էգոիզմը նաև իրական կյանքում հաղթահարել, քանի որ էգոիզմի արմատները՝ մասնավոր սեփականությունը, ոչնչացրել է։ Սակայն պետք է ասել, որ էգոիզմը երևում է ոչ միայն հարստության, այլև իր մեկ ուրիշ դրսևորման մեջ, որը նկատելի է դառնում այն հասարակության մեջ, որտեղ չկա մասնավոր սեփականություն։ Այդպիսի դրսևորում է, օրինակ, աշխատանքից խուսափելը։ Եվ իրականում, սովետական մամուլը լի է աշխատանքից խուսափողների և ծույլերի մասին դանգատներով»[6]։ Սա բացահայտ գրպարտություն է մեր գաղափարախոսության և սովետական իրականության հասցեին։ Սովետական մարդկանց աշխատանքի ու կյանքի համար ընդհանուրս ու տիպականն այն է, որ նրանց մեջ խոր արմատներ է գցել կոլեկտիվիզմը։ Մեր երկրում իրականություն է դառնում Վ. Ի. Լենինի այն հանճարեղ կանխատեսումը, որ սովետական մարդիկ կաշխատեն վերացնել «յուրաքանչյուրն իր համար, միայն աստված բոլորի համար» անիծյալ կանոնը։ Նրանց գիտակցության մեջ, սովորության մեջ, նրանց ամենօրյա կենցաղի մեջ կարմատավորվի «բոլորը մեկի և մեկը բոլորի համար» կանոնը[7]։ Եվ իրոք, մեր մարդկանց կյանքում ավելի ու ավելի լայն կիրառում է գտնում «մեկը բոլորի և բոլորը մեկի համար» սկզբունքը։ Ընդ որում, պետք է նշել, որ նորարարների, արտադրության առաջավորների աշխատանքի գրական փորձի մասսայականացումը շատ բանով օգնում է մեր հասարակության մեջ հաստատելու ընկերական համագործակցության և փոխօգնության հարաբերություններ, հաղթահարում է էգոիզմի և ինդիվիդուալիզմի մնացուկները, ոգեշնչում է անհատի բարձր ակտիվությունն ու նախաձեռնությունը, նպաստում է հասարակության, սոցիալիստական արտադրահարաբերությունների կատարելագործմանը։ Առաջավոր փորձի մասսայականացումը, հասարակության համար նրա մեծ հարստությունը դառնալը, կրկին անգամ հաստատում է մարքսիզմ-լենինիզմի տեսության անկյունաքարը հանդիսացող այն դրույթը, որ որքան էլ արտադրության, հասարակության զարգացման գործում մեծ լինի աշխատանքի նորարարների, առաջավորների դերը, չնայած այն բանին, որ նրանք հազարներ ու միլիոններ են, այնուամենայնիվ, գլխավորն այն է, որ առաջավորների փորձը դառնա

---

[6] Gustav A. Wetter, Sowjet Idiologie heute, Frankfurt am Main, 1962, S. 271.

[7] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 140։

մասսաների սեփականությունը, մասսաները դառնան որոշիչը, միայն այդ ժամանակ ապահովված կլինի հասարակության առաջադիմությունը։

Աշխատավորական մասսաների նախաձեռնության և ստեղծագործական ակտիվության վառ արտահայտություններ հանդիսացող ռացիոնալիզատորների և գյուտարարների, արտադրության նորարարների շարժումը գործով հերքում է մասսաների՝ ստեղծագործ աշխատանք կատարելու անկարողության վերաբերյալ բուրժուական լեգենդը, այն հակագիտական տեսակետը, թե մասսաներն անընդունակ են առաջ մղելու հասարակության առաջադիմությունը։ Բուրժուական գաղափարախոսությունը ձգտելով աշխատավորների մեջ թերահավատություն առաջացնել սեփական ուժերի նկատմամբ, փորձում է ապացուցել, որ հասարակական զարգացման վճռական ուժը նշանավոր անհատների գործունեությունն է, իսկ ժողովրդական մասսաների ակտիվությունը ոչ միայն չի նպաստում հասարակական առաջադիմությանը, այլև, ընդհակառակն, արգելակում է այն։ Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի այժմյան պրեզիդենտ, մեքսիկական փիլիսոփա Ֆր. Լարոյոն փիլիսոփաների միջազգային 13-րդ կոնգրեսում կարդացած իր զեկուցման մեջ նշում է, որ քանակական տեսակետից մասսան ամբոխ է, իսկ որակական տեսակետից այն ինչ-որ անոնիմ է, ընդհանուր և բուն մասսայի համար հատկանշական է սոցիալ-մանկավարժական հետևյալ կատեգորիան — ստոր, վուլգար, կուլտուրայի միջակ մակարդակ։ Մասսան կազմում են մարդիկ, որոնք ունեն կյանքի ծայրահեղորեն սահմանափակ մտահորիզոն։ Նա նշում է, որ մասսայի կողքին հասարակության մեջ առկա է նաև ընտրյալների փոքրամասնությունը, էլիտան։ Սրանք բնութագրվում են ոչ թե տնտեսական հասկացողությամբ, այլ կուլտուրական կատեգորիայով՝ կենսական բարձրագույն ստեղծագործության ընդունակությամբ։ Առանց ստեղծագործող փոքրամասնության հասարակությունը կքայքայվի, հանդես կգա անկում և բարբարոսություն[8]։

Մեր օրերի բուրժուական սոցիոլոգիայի համար հատկանշական է այն, որ նա աշխատավորական մասսաների դերը ժխտում է ոչ միայն քաղաքական ու կուլտուրական կյանքում, այլև աշխատանքում, արտադրության, տեխնիկայի զարգացման գործում։ Լիովին ժխտվում է բանվոր դասակարգի տեխնիկական ստեղծագործության նշանակությունը։ Մերկացնելով բուրժուազիայի գաղափարախոսների այս նկրտումները, ամերիկյան մարքսիստ Հերբերտ Ապտեկերն իր «Իմպերիալիզմի լաուրեատները» գրքում[9] համոզիչ կերպով ցույց է տալիս, որ ոչ Ռոկֆելերը, ոչ Գուլդը և ոչ էլ Հուգենհեյմն են կատարել նյութական նվաճումների հրաշքները, փորել նավթահորերը, կառուցել երկաթուղիները և հանքից հանել պղինձն ու դարձել «հասարակական-ստեղծագործ ուժը», «մեր նյութական զարգացման հերոսները», այլ ժողովուրդը, աշխատավորական մասսաները։ Բուրժուազիայի գաղափարախոսության այդ կեղծիքի բացարձակ մերկացումն է հանդիսանում մեր երկրի, Հայաստանի բանվոր դասակարգի տեխնիկական ստեղծագործության աննախընթաց աճը, այդ ստեղծագործության վառ արտահայտություններ հանդիսացող ռացիոնալիզատորների և գյուտարարների շարժման բուռն զարգացումը։

Բոլորովին այլ հարց է այն, որ կապիտալիստական արտադրահարաբերու-

---

[8] Տե՛ս Fr. Larroyo. Problema y problemas de la crítica de la epoca.— „Proceedings of the XIIIth International Congress of Philosophy", vol. 1, Mexico, 1963.

[9] Г. Аптекер. Лауреаты империализма, М., ИЛ., 1955.

թյունների պայմաններում բանվորը քաջ գիտակցելով, որ իր աշխատանքը շահագործում են, որ ինքն անազատ է, իր աշխատանքը սիրում է այնքան, որքանով այն աշխատավարձ է բերում, իսկ այդպիսի աշխատանքը երբեք էլ կենսական պահանջմունք, հոգեկան հաճույք դառնալ, ստեղծագործական ոգևորության աղբյուր լինել և աշխատանքային բարձր ակտիվության մղել չի կարող։ Նա չի կարող նպաստել բանվորի մոտ քաղաքացիական և անձնական արժանապատվության զգացման կատարելագործմանը, հասարակության շահերին ծառայելու պահանջմունքի զարգացմանը։

Այլ է բանվորների աշխատանքի, նրանց տեխնիկական ստեղծագործության վիճակը սոցիալիստական արտադրահարաբերությունների պայմաններում։ Ռացիոնալիզատորության և գյուտարարության բնագավառում բանվորների ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության ծավալման համար բացի այն, որ վճռական նշանակություն ունեն վերևում ցույց տրված հիմնական նախադրյալները, լավագույն պայմաններ են ստեղծում նաև հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կուսակցական ու հասարակական կազմակերպությունները, տեխնիկական ու տնտեսական ղեկավարները։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր կուսակցական կազմակերպությունները ռացիոնալիզատորների և գյուտարարների շարժման մեջ տեսնում են աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակման կարևոր ձևը, նրանք ամենօրյա աշխատանք են կատարում բարձրացնելու ռացիոնալիզատորների և գյուտարարների ստեղծագործ աշխատանքի հասարակական նշանակությունը, ցույց են տալիս այն գլխավոր դերը, որ նրանք կատարում են տեխնիկական առաջադիմության արագացման գործում։ Սակայն հարկավոր է նշել նաև այն, որ չնայած ռացիոնալիզատորների և գյուտարարների շարժման տնտեսական և հասարակական մեծ ուժ լինելուն, ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որտեղ այդ շարժումը դեռևս չունի իր պատշաճ տեղն ու դերը, կուսակցական և հասարակական կազմակերպությունները հետևողական աշխատանք չեն կատարում վերացնելու այն թերությունները, որոնք խոչընդոտում են ռացիոնալիզատորների ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության բազմակողմանի զարգացմանը։ Ակնառու է, որ հիմնական թերությունը որոշ գործարաններում և ֆաբրիկաներում այդ հիանալի շարժման մասսայականության բացակայությունն է, որի հիմնական պատճառը ռացիոնալիզատորների և գյուտարարների մեջ բանվորների անբավարար տեսակարար կշիռն է։ Վիճակն այդպիսին է Ջերժինսկու անվան հաստոցաշինական, ավտոպահեստամասերի, Մյասնիկյանի անվան մեխանիկական, էլեկտրամեխանիկական, կենցաղային քիմիայի գործարաններում և այլ ձեռնարկություններում։ Փաստերի վերլուծությունից երևում է, որ այստեղ գյուտարարության և ռացիոնալիզացիայի մասսայական չդառնալու հիմնական պատճառներից մեկը շարժման նկատմամբ եղած ձևական մոտեցումն է, որոշ դեպքերում էլ բյուրոկրատիան, անհարգի ձգձգումները ու քաշքշուկը։ Քիչ չէ ինչպես ընդունված և ներդրված, այնպես էլ ներկայացված և քննարկված առաջարկությունների տարբերությունը։ Բանվորները իրենց ստեղծագործական աշխատանքի նկատմամբ անտարբեր վերաբերմունք տեսնելուց հետո, իրենք էլ աստիճանաբար սկսում են անտարբեր դառնալ նորի և առաջավորի նկատմամբ։ Այս գործի վրա բացասական ազդեցություն է թողնում այն, որ որոշ տեղերում անբավարար է

տեխնիկական ինֆորմացիայի դրվածքը։ շատ դեպքերում բանվորները անտեղյակ են, թե բացի իրենց բրիգադից և արտադրամասից աշխատանքներն ինչպիսի՞ ընթացք ունեն ամբողջ ձեռնարկությունում, որո՞նք են արտադրության նեղ տեղերը, չգիտեն տեխնիկական առաջադիմության խոչընդոտների, պետական առաջադրանքների կատարման դժվարությունների մասին։ Դրանով վերանում են այն անմիջական ազդակները, որոնք նրանց տեխնիկական ստեղծագործության են մղում։

Արտադրության բազմաթիվ նորարարների հետ ունեցած զրույցները և նրանց գործունեության, կյանքի ու պրակտիկայի վերլուծությունը բերում է այն եզրակացությանը, որ ռացիոնալիզատորական շարժման հետագա ծավալմանը, նրա գործունակության է՛լ ավելի բարձրացմանը շատ բանով կնպաստեր արդյունաբերության մեջ ամբողջությամբ վերցրած արտադրության նորարարների նյութական և բարոյական խթանների հետագա կատարելագործումը։ Ռացիոնալիզատորների մոտ նյութական շահագրգռվածությունը պակաս է այն առաջարկությունների նկատմամբ, որոնք վերաբերում են նյութերի խնայողությանը։ Այդ դեպքում վարձատրությունը կատարվում է տարեկան պայմանական խնայողության միայն 50%-ից։ Այժմ, երբ դրված է արտադրանքի որակն ու հուսալիությունը բարձրացնելու, համաշխարհային լավագույն ստանդարտներին համապատասխան արտադրանք թողարկելու կարևոր խնդիրը՝ ճիշտ չի լուծված նաև որակին վերաբերող ռացիոնալիզատորական առաջարկությունների վարձատրության հարցը։

Ըստ սահմանված կարգի ռացիոնալիզատորը որպես դրամական վարձատրություն ստանում է իր առաջարկության ներդրումից ձեռնարկության ստացած մեկ տարվա պայմանական խնայողության 0,5—13 տոկոսը։ Գուցե նպատակահարմար լիներ չշեղվելով վճարումների սահմանված լիմիտից և դիֆերենցման դիապազոնից, առավել ընդհանրական բնույթի (այլ բնագավառներում կիրառելի լինելու իմաստով) և տևական (երկար ժամանակ ուժը պահպանելու իմաստով) առաջարկությունների համար վճարը կազմակերպվեր դիֆերենցման վերին սանդղակին մոտ տոկոսներով։ Ընդ որում, որպես ստեղծագործ աշխատանքի հեղինակ ռացիոնալիզատորը օգտվեր հեղինակային իրավունքի ընձեռած մեկ այլ աղբյուրից ևս՝ իր առաջարկությունը այլ ձեռնարկություններում ներդրվելու դեպքում ստանար համապատասխան դրամական վարձատրություն։

Հարկավոր է կատարելագործել նաև ռացիոնալիզատորների և գյուտարարների բարոյական խրախուսման միջոցները։ Գուցե հարկավոր լիներ որոշակի ժամանակաշրջանում (ասենք 5—7 տարիների ընթացքում) ռացիոնալիզատորական առաջարկություններից սահմանված չափով երկրին տնտեսական օգուտ տալու դեպքում ռացիոնալիզատորներին և գյուտարարներին արժանացնել կառավարական պարգևների։

Այս թերությունները, բնական է, չեն կարող նսեմացնել ռացիոնալիզատորների և գյուտարարների շարժման մեծ դերն ու նշանակությունը։ Այդ շարժումը հանդիսանում է աշխատավորների ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության բնորոշ արտահայտություններից մեկը և կարևոր դեր է կատարում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, հասարակական նոր հարաբերությունների զարգացման գործում։ Ռացիոնալիզատորների շարժումը ակտիվ դեր է խաղում կոմունիստական հասարակարգի մարդու ձև-

վավորման, նրա լավագույն հատկանիշների կազմավորման և զարգացման պրոցեսում, այն մեր երկրի միլիոնավոր աշխատավորների դարձնում է իսկական ստեղծագործողներ, էական ազդեցություն է գործում նրանց նախաձեռնության, ստեղծագործական ընդունակությունների բացահայտման ու զարգացման վրա։

М. М. Минасян

ДВИЖЕНИЕ РАЦИОНАЛИЗАТОРОВ И ИЗОБРЕТАТЕЛЕЙ КАК ПРОЯВЛЕНИЕ ТВОРЧЕСКОЙ АКТИВНОСТИ ТРУДЯЩИХСЯ

Резюме

В статье движение рационализаторов и изобретателей рассматривается как характерное проявление возрастания трудовой активности и инициативы трудящихся в экономической жизни нашего общества, в осуществлении технического прогресса. На основе исследования конкретного фактического материала трудовой деятельности рабочих промышленных предприятий Арм. ССР в статье анализируются содержание, основные направления и цели развития движения рационализаторов и изобретателей.

Анализ деятельности рационализаторов и изобретателей промышленных предприятий республики вскрывает и другую важную особенность этого движения—тесное сотрудничество рабочих и инженеров, которое в значительной степени способствует вообще развитию взаимоотношений сотрудничества и помощи в промышленности. В этом свете в статье рассматривается вопрос распространения и внедрения передового опыта работы, показывается, как передовой опыт творческого труда становится значительной экономической и общественной силой. Одновременно показывается победа коллективизма над буржуазным индивидуализмом, который сковывает трудовую активность рабочих коллективов, творческую активность каждого из них. В этой связи подвергаются критике ошибочные взгляды известного «советолога» Густава Веттера и президента международной федерации философских обществ, мексиканского философа Фр. Ларройо.

В статье на основе исследования конкретного материала показываются некоторые недостатки, имеющие место на промышленных предприятиях Армении, которые препятствуют развитию движения рационализаторов и изобретателей, даются рекомендации, которые, по мнению автора, могут быть полезны для устранения этих недостатков, создания лучших условий для дальнейшего развертывания движения рационализаторов и изобретателей.

Автор статьи приходит к заключению, что движение рационализаторов и изобретателей, являясь одним из характерных проявлений трудовой активности и творческой инициативы масс, выполняет важную роль в создании материально-технической базы коммунизма, развитии новых общественных отношений, оказывает активное влияние на процесс формирования человека, строящего коммунистическое общество, существенно влияет на характер труда, способствует перерастанию социалистического труда в труд коммунистический.